ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

30.10.2019
343-57

ՀՀ պաշտպանության նախարար
պարոն Դավիթ Տոնոյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Տոնոյան,

Հոկտեմբերի 16-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր Պաշտպանության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություն գերատեսչության ծառայողական մեքենաների քանակի մասին, ինչպես նաև կցել մեքենաների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր մեքենայի մակնիշը և պետհամարանիշը:

ԻԱԿ հարցմանն ի պատասխան 2019 թվականի հոկտեմբերի 22-ին Պաշտպանության նախարարությունը ուղարկել է գրություն, որով մերժել է տրամադրել պահանջվող տեղեկությունը՝ որպես հիմք նշելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ԻԱԿ նույնաբովանդակ հարցմանն ի պատասխան ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը տրամադրել է լիարժեք պատասխան (հարցման և պատասխանի հղումը՝ http://www.givemeinfo.am/hy/case/2842/): ԱԱԾն միայն չի տարմադրել պետհամարանիշները՝ այդ տվյալների գաղտնի լինելու հանգամանքով պայմանավորված:

Ուստի ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ եւս մեկ անգամ դիմում ենք Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա ունի Ձեր ղեկավարած գերատեսչությունը:
2. Խնդրում ենք տրամադրել մեքենաների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր մեքենայի մակնիշը և պետհամարանիշը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան